



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՅ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկան՝ Հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հրայր Հովհաննիսյան

Ուսումնական հաստատություն՝ Արևածաղի Կարո Մելիքսեթյանի
անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Ներածություն

Նպատակ՝ Վեր հանել ընտանեկան հոգեբանության ազդեցությունը կրթության վրա, ընդգծել կոնֆլիկտներ հաղթահարելու գործում հասարակագիտության ներդրումները:

Խնդիրներ՝

- Ներկայացնել ընտանեկան հոգեբանությունը
- համապարփակ ներկայացնել դրա խախտումները
- ուսումնասիրել ազդեցությունը երեխաների հոգեվիճակի և կրթության որակի վրա
- ուսումնասիրել կոնֆլիկտաստեղծ գործոնները և սովորողների պատրաստվածությունը՝ դրանք նախականիսելու , կանխելու կամ լուծելու

Մեթոդաբանություն

- Վերլուծություն
- Միջազգային փորձի դիտարկում
- Համեմատություն և ընդհանրացում

Արդիականություն

- Երեխայի սոցիալականացման գործընթացն առաջին հերթին ընթանում է ընտանիքում՝ սոցիալական դերերի, արժեքների յուրացման և սեփական վերաբերմունքը մշակելու, անհատական առանձնահատկություններն իրագործելու միջոցով: Հետևաբար, դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերած սոցիալական դիրքորոշումները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են վախերի և տագնապների դրսևորմանը: Ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությունը մեծ է կրտսեր դպրոցականի վախերի կանխարգելման գործում: Ընտանիքի կառուցվածքը, ընտանեկան դերերը, հիմնական գործառույթները, ներընտանեկան հարաբերությունների մակարդակները կարևոր դեր և նշանակություն ունեն երեխայի վախերի դրսևորման և կանխարգելման գործընթացում:

Ընտանիքը նաև այն սոցիալական միջավայրն է, որտեղ երեխան դպրոցում անցկացրած մի քանի ժամերից հետո փորձում է վերլուծել օրվա իրադարձությունները տպավորությունները և տեղեկությունները, որոնք պայմանավորված են ներընտանեկան հարաբերությունների բնույթով և ծնողի վերաբերմունքով: Ընտանիքի դերը երեխայի հոգեկան առողջության պահպանման գործում արդիական է հատկապես ներկայիս պայմաններում, երբ տեղեկատվության մեծ հոսքը դժվարեցնում է ինքնուրույն կողմնորոշվելը: Իրականի և երևակայականի սահմանագծին գտնվող կրտսեր դպրոցականը հայտնվելով անելանելի իրավիճակում, չի կարողանում համարժեք վարքագիծ դրսևորել և հայտնվում է վախի, տագնապի ոլորաններում: Վախի հիմնախնդիրը հին է, բայց և միշտ էլ այսօրեական, քանզի դրա գոյության պատճառների ու պայմանների փոփոխություններն անհրաժեշտ են դարձնում երևույթի նորովի գիտական վերլուծությունն ու արժևորումը, դրա կանխարգելման ու հաղթահարման նոր մեթոդների և ձևերի մշակումը: Տագնապը սոցիալական կյանքի արդյունք է, որը մեծապես կախված է սոցիալական դիրքորոշումներից և կարող է պարարտ հող հանդիսանալ կրտսեր դպրոցականի վախերի դրսևորման համար: Թե ինչպե՞ս, կամ թե ի՞նչ չափով կարտահայտվի այս կամ այն վախն ընդհանրապես, մեծամասամբ կախված է երեխայի հոգեկան զարգացման առանձնահատկություններից և կոնկրետ այն սոցիալական միջավայրից, որում ձևավորվում և ընթանում է նրա անձի զարգացումը: Կրտսեր դպրոցականի վախերի կանխարգելման գործում կարևորվում է հատկապես ծնողների հոգեբանական գիտելիքների հարստացումը, նրանց կողմից երեխայի բազմակողմանի զարգացումն ապահովող դաստիարակությունը, ընտանեկան առողջ մթնոլորտը, դպրոցում ստացած գիտելիքների ամրապնդումը ծնողների օգնությամբ: Այդ իսկ պատճառով, թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով արդիական է կրտսեր դպրոցականի 4 ընտանիքի, ներընտանեկան հարաբերությունների, ծնողական վերաբերմունքի ուսումնասիրումը: Ընտանիքի դերի հետազոտումը

հնարավորություն կընձեռի միջոցներ ձեռնարկել երեխայի զարգացման ընթացքում ընտանեկան միջավայրով պայմանավորված վախերի կանխարգելման և ընտանիքի դերի՝ որպես վախերի կանխարգելման միջոցի բարձրացման համար:

Բովանդակություն

| | |
|-----------------------------------|----|
| Նախաբան----- | 4 |
| 1. Ընտանիքի հոգեբանություն----- | 6 |
| 2. Ընտանիքի տեսակները----- | 7 |
| 3. Ընտանիքի գործառույթները----- | 7 |
| 4. Կոնֆլիկտ-9 | |
| 5. Եզրակացու թյուն----- | 14 |
| 6. Օգտագործված գրականություն----- | 15 |

ՆԱԽԱԲԱՆ

Իմ աշխատանքի ներածական բաժինը ես սկսում եմ հարցով .

Չարց, որն ավելի շատ ուղղված է ինձ: Որին ես իմ այս հետազոտական աշխատանքի ուսումնասիրության ընթացքում առավելագույնս համոզվել եմ ,որ այն շատ կարևոր թեմա է և իմ կողմից թեմայի ճիշտ ընտրության է կատարվել:

Չաջորդիվ փորձեմ կառուցել մտքերս և ներկայացնել դիրքորոշումս ու վերաբերմունքս առհասարակ ընտանիք հասկացությանը, ընտանիքի հոգեբանությանը, տեղայնացնելով թեման և դիտարկեմ ազգային պրիզմայով,ազգայինի տեսանկյունից ու անդրադառնամ նաև հայ ընտանիքին և առհասարակ կոնֆլիկտներին:

Ընտանիքի տեսակների, գործառույթների, դերի մասին ներածական մասում կըրջանցեմ: Այն կներկայացնեմ բուն աշխատանքում:

Լինելով մանկավարժներ, մտնելով կրթօջախ, ընտրելով ուսուցանելու

պատասխանատվությունը մեր առաքելությունն է բացի մեր մասնագիտական առարկայից գիտելիք հաղորդել ընտանիք համայնքի, ընտանիք ինստիտուտի ներկայացուցիչ- աշակերտներին, այլ նաև համակողմանի վերաբերմունքի արժանացնելով՝նրանց մոտ ձևավորելով կամ զարգացնելով կառուցողականություն, հանդուրժողականություն, հոգատարություն, պատրաստակամություն, հարգելու ունակություն, պիտանի լինելու ձգտում, օգտակար լինելու և օգելու աներկբա կամք, մի խոսքով այն կատեգորիանները, այն

արժեքները որոնք ընկած են առողջ ընտանիքի, հետևաբար և առողջ հասարակության հիմքում:: Չէ որ մենք ավելին ենք քան պարզապես որևէ առարկայի ուսուցիչ, որի խնդիրը միայն Ավարայրի ճակատամարտը կամ այլ պատմական իրադարձությունների մասին գիտելիք տվողը, կամ Պյութագորասի թեորեմը ապացուցելը սովորեցնողը միայն,

այլ մեր մեծ առաքելությունն է համակողմանի գիտելիքներով ու հանտկանիչներով օժտված մարդ, ապա նաև քաղաղացի ձևավորելն է ընտանիք-դպրոց-հասարակություն եռամիասնության մեջ: Եվ ավելի մեծ բաժինը և դերը պետք է ստանձենք մենք՝ մանկավարժներս:

ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ: ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

1. Ընտանիքը, ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված՝ մարդկանց փոքր խումբ, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Որպես սոցիալական երևույթ, ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնություն:

Ընտանիքը սերնդի վերարտադրության հիմնական բջիջն է:

Ամուսնությունը և ընտանիք կազմելը յուրաքանչյուր մարդու համար կենսական կարևորագույն անհրաժեշտություն են:

Ամուսնությունը կնոջ և տղամարդու միությունն է, սոցիալական կապի հատուկ ձև: Ամուսնությունը ընտանիքի ձևավորման որոշակի և անհրաժեշտ փուլ է: Ի՞նչը կարող է դրդել մարդկանց ամուսնանալ: Իհարկե սիրելու և սիրված լինելու, երեխաներ ունենալու, նրանց խնամելու, դաստիարակելու և բարեկեցիկ ու ապահով կյանքով ապրելու ցանկությունները:

Ընտանիքի հիմնական գործառույթներից մեկը այն է, որ նա հիմք է ստեղծում սոցիալական և կենսաբանական էակների արտադրության և վերարտադրության համար: Դա կարող է իրականացվել սնելով, խնամքի և դաստիարակության, իրավունքի, պարտականությունների, բարոյական և զգացմունքային կապերի ապահովմամբ: Ընտանիք հասկացությանը բնորոշ են արյունակցական, զգակցական կապերը և համատեղ բնակությունը:

Ընտանիքում հարաբերությունները սերտ են և անմիջական: Ընտանիքի անդամները մշտապես կապի մեջ են, տեսնում են իրար, մտքեր ու կարծիքներ փոխանակում, համատեղ հուզական վիճակներ են ունենում, լավ են միմյանց ճանաչում, հաշվի են առնում միմյանց կարծիքները, առաջնորդվում են ընտանիքի անդամի կողմից տված խորհրդով և գնահատականով: Ընտանիքի ավանդական միջուկը ամուսնական զույգն է:

Այն լրացնում են երեխաները, ազգականները, ամուսինների ծնողները :
Ընտանիքը միակ խումբն է, որ մեծանում է ոչ թե դրսից՝նոր անդամների
ներգրավման հաշվին, այլ ներսից՝ շնորհիվ ծնվող երեխաների:

Սովորաբար ընտանիքի տեսակները դասակարգում են ըստ կառուցվածքի:
Առավել ընդունված է տարբերակել ընտանիքի երկու հիմնական տեսակ՝
միջուկային և ընդլայնված: Միջուկային ընտանիքը կազմված է միայն հիմնական
անդամներից՝ ամուսնական զույգից և նրանց զավակներից: Ընդլայնված
ընտանիքը բացի ամուսիններից և երեխաներից, ներառվում են նաև տատը,
պապը և այլ հարազատներ:

Ընտանեկան հարաբերությունների հիմքում ընկած է ընտանիքի պատմական
զարգացումը:

Այսինքն այն զարգանում է պարզից բարդ, մայր իշխանությունից դեպի հայր
իշխանություն: Ժամանակակից ընտանիքի առարջնային ձևը նահապետական
ընտանիքն է, որին բնորոշ էր ընտանիքում տղամարդու գերիշխանությունը:
Ընտանիքի այս տեսակը ներառում է մինևույն հարկի տակ ապրող միջ քանի
սերունդ՝ հայրեր- որդիներ-թոռներ-ծոռներ:

Ընտանիքի այս տեսակը որոշ փոփոխություններով այսօր էլ դեռ հանդիպում է:
Հասարակության զարգացմանը զուգընթաց ավանդական նահապետական
ընտանիքը փոփոխվում է, առաջ է գալիս ժամանակակից ընտանիքը, որին
հատուկ են առավել հավասարակշռված ընտանեկան հարաբերություններ,
ընտանիքում կանանց առավել ակտիվ դերակատարումը:

Ժամանակակից ընտանիքի գործառույթներից կարելի է առանձնացնել
չորսը: վերարտադրողական գործարույթ, երբ ընտանիքում ծնվում են
երեխաներ, դրանով ապահովելով սերնդի վերարտադրությունը:

Տնտեսական գործառույթ, երբ ընտանիքը վաստակում է կենսական միջոցներ
ծախսում՝ ապահովելով իր նյութական բարեկեցությունը :

Սոցիալական, դաստիարակչական գործառույթ, երբ երեխան յուրացնում է
նախորդ սերնդի փորձը, հասարակության մեջ ընդունված վարքի նորմերն ու
կանոնները: Ընտանիքը այն առաջին միջավայրն է , որտեղ աճում և զարգանում-

Է երեխան, ուստի այն հանդիսանում է առաջին դպրոցը երեխայի համար, որտեղև
ունի օգնությամբ սովորում է ապրել:

Յարտոգրական գործառույթի շնորհիվ ընտանիքի անդամերը շփվում են
միմյանց հետ,

զգացմունքներ, հույզեր, կարծիքներ են փոխանցում, փոխանակում միմյանց հետ,
դրանով խթանելով միմյանց զարգացմանը, անձային, հոգեբանական
վերափոխումներին:

Ընտանիքում, որպես սոցիալական խումբ, ամեն անդամ ունի իր դերն ու
դիրքը: Նոր ժամանակներում փոխվում են շատ արժեքներ և ավանդական
պատկերացումներ, այդ թվում ընտանեկան դերերի և հարաբերությունների
մեջ:

Ժամանակակից հասարակությունում հայրն հանդես է գալիս մոր հետ
զուգընկեր երեխաների դաստիարակության գործում, իսկ կինը ընտանեկան
դերը համատեղում, է աշխատանքայինով: Յամերաշխ ընտանիքը կարող է ինքը
կարգավորել դերային հարաբերությունները, օրինակ՝ նրանք կարող են
փոխադարձ համաձայնությամբ որոշակի ժամանակով փոխել դերերը կամ որևէ
դեր համատեղ կատարել: Նման

փոխհամաձայնությունը նույնպես ընտանեկան երջանկության գրավական է:

ԿՈՆՖԼԻԿՏԵՐ

Ի՞նչ է կոնֆլիկտը: Այդո՞ք այն կարող է դրական ազդեցություն ունենալ: Ի՞նչն է ընկած դրա հիմքում և ինչպե՞ս վարվել կոնֆլիկտային իրավիճակներում. ահա այն հարցերը, որոնց կանդրադառնանք սույն վերլուծության շրջանակում:

Առհասարակ, կոնֆլիկտներն այնքան համընդհանուր և բազմատեսակ են իրենց բնույթով, որ առաջին հայացքից անհնար է թվում մեկ ամբողջական սահմանում տալը: Ինչպես

կասեր Օսկար Ուայլդը. «Սահմանել՝ նշանակում է սահմանափակել»: Այնուամենայնիվ, կոնֆլիկտը ինչ-որ առարկայի շուրջ առկա տարածայնությունն է:

Ընտանեկան կյանքը մշտապես հարթ ու սահուն չի: Ամուսինների միջև հնարավոր են նաև վեճեր և կոնֆլիկտներ, որոնք կարող են ընդգրկել ընտանեկան կյանքի ամենատարբեր ոլորտներ՝ հաղորդակցություն, նյութական բարեկեցություն, երեխաների դաստիարակություն, ազատ ժամանակաի կազմակերպում, հետաքրքրություններ, վատ սովորություններ:

Բազմաթիվ ընտանիքներ իրենց գոյության ժամանակահատվածներում մեկ կամ մի քանի անգամ կարող են հայտնվել ճգնաժամային վիճակում: Պատահական չէ, որ ժամանակակից ընտանիքի հոգեբանության բնագավառում ճգնաժամերի ուսումնասիրությանը մեծ նշանակություն է տրվում: Ամուսինների միջև ճգնաժամ կարող է ծագել վերոհիշյալ հիմնական պահանջմունքներից և սպասումներից յուրաքանչյուրի չբավարարված մնալու դեպքում կոնֆլիկտներն ու ճգնաժամերն է՛լ ավելի սուր ու տանջալից են լինում, երբ դրանք ծագում են մեկից ավելի պահանջմունքների չբավարարված մնալու հետևանքով: Սկզբունքորեն, որքան ցածր է կոնֆլիկտի բարդության աստիճանը, այնքան ավելի հեշտ է մեղմել կամ լուծել այն: Բարդ կոնֆլիկտները, որոնք ընդգրկում են չբավարարված երկու կամ ավելի պահանջմունքներ և դերային սպասումներ, շատ դժվար է լուծել:

ճգնաժամն էլ ավելի բարդ է դառնում, երբ դրանում ընդգրկվում են ոչ միայն հիմնական

գործող անձինք (տվյալ դեպքում ամուսինները), այլև նրանց ռեֆերենսային խմբերը

(օրինակ՝ ծնողների ընտանիքները):

Ներընտանեկան ճգնաժամը բարդ և ավերիչ է դառնում, երբ նրանում ընդգրկվում են նաև ընտանիքի այլ անդամներ, հատկապես երեխաները, այսինքն՝ երբ ընտանիքը տրոհվում է հակառակորդ ենթախմբերի:

Կա երկու տեսակ կամ մակարդակ.

- 1) պարզ ճգնաժամ, որը հետևանք է միայն մեկ կոնֆլիկտի զարգացման,
- 2) բարդ համալիր ճգնաժամ, երբ ամուսինների փոխհարաբերություններում միաժամանակ սրվել, խորացել և ճգնաժամի բնույթ են ստացել մեկից ավելի կոնֆլիկտներ: Անշուշտ, բարդ ճգնաժամերն էլ տարբեր ենթամակարդակներ են ունենում՝ կախված այն բանից, թե քանի կոնֆլիկտ և անհամաձայնություն է ծագել կողմերի միջև: Դրանք բազմաչափ կոնֆլիկտներ և ճգնաժամեր են: Ընդ որում՝ որքան ավելի մեծաթիվ են ճգնաժամի բարդույթի մեջ մտնող կոնֆլիկտները, այնքան ավելի դժվարին են դառնում ստեղծված վիճակը և նրանից դուրս գալու ուղիների որոնումը: Ելնելով կոնֆլիկտներին և ճգնաժամերին մեր կողմից տրված բնութագրերից՝ կարծում ենք, որ ընտանեկան ճգնաժամ առկա է այն դեպքում, երբ ընտանիքի

անդամների միջև գոյություն ունեցող հակասություններն ու անհամաձայնությունները՝ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ, գիտակցված կամ չգիտակցված, անհատական կամ հասարակական գործոնների ազդեցությամբ, ընդունում են կոնֆլիկտների բնույթ, իսկ ապա նաև դառնում ճգնաժամեր: Այդպիսի դեպքում ընտանիքի անդամների միջև արդյունավետ համագործակցությունն ու համատեղ գործունեությունն անհնարին են դառնում: Ընտանիքի առջև խնդիր է ծագում. հաղթահարելու այդ ճգնաժամը: Լուծման երկու հիմնական ուղիներ կան.

ա) բաժանվել միմյանցից, հեռանալ ինչպես տարածականորեն, այնպես էլ հոգեբանորեն, և այդպես վերացնել կոնֆլիկտները: Դա ընտանիքի լուծարման, տրոհման ուղին է:

բ) Գտնել այնպիսի կառուցողական լուծում, որը թույլ կտա անցնել ընտանեկան կյանքի նոր և ավելի արդյունավետ փուլի: Իրական կյանքում լուծման այս երկու ձևերն էլ հանդիպում են: Առաջինը հանգեցնում է ամուսնալուծության, իսկ երկրորդը թույլ է տալիս, որպեսզի ընտանիքը պահպանի իր ամբողջականությունը և շարունակի իր արդյունավետ կյանքի ուղին:

Յոգեբան խորհրդատուն ամուսնական կյանքի առաջին ճգնաժամի հաղթահարման ընթացքում, անկասկած, այլ տեսակի խորհրդատվական աշխատանք էլ է կատարում, չի սահմանափակվում միայն ներընտանեկան դերերի հետ անմիջականորեն կապված հարցերով:

Օրինակ, խորհուրդներ են տրվում այն մասին, թե ինչպես պետք է «զօժել»

սեփական ընտանիքի ներքին և արտաքին սահմանները և ամուսինների միջև մտերմության ինչպիսի աստիճանն է նպատակահարմար: Խորհուրդներ են տրվում այն մասին, թե որն է ընտանիքի ցանկալի հարաբերությունը սոցիալական այլ խմբերի և անձանց հետ: Այդ խնդիրները ևս միջնորդավորված ձևով կապված են ներընտանեկան դերերի և ընտանիքի ու այլ խմբերի հարաբերությունների հետ: Վերջապես, ամուսինների դերերին անմիջականորեն առնչվում են նաև այն խնդիրները, որոնք նրանց տրվում են սեռական կյանքի, փոխադարձ հարմարման և կոնֆլիկտների վերաբերյալ: Խնդրի միջուկը, այնուամենայնիվ, դերային փոխհարաբերություններն են:

Չայտնի է, որ ընտանիքը ամենալավ միջավայրն է երեխայի խնամքի և դաստիարակության համար, քանի դեռ այնտեղ ապահովված է նրա պաշտպանությունը: Կապվածության և սիրո հարաբերությունները բարենպաստ և անհրաժեշտ նախադրյալներ են երեխայի անձի

նորմալ զարգացման համար:

Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր հասարակություն իր պատկերացումն ունի մանկության մասին, որը հուշում է, թե այդ հասարակության մեջ երեխայի

նկատմամբ ինչպիսի վերաբերմունք կարելի է որակել որպես վատ: Այնուամենայնիվ, մարդկային հասարակության մեջ երեխայի նկատմամբ ցուցաբերվող չարաշահումն ու բռնությունը համընդհանուր երևույթներ են: Դատելի է ունենում տարբեր հասարակարգերում և բոլոր երկրներում ու ներառում երեխայի հանդեպ իրավունքների ոտնահարում ենթադրող վերաբերմունքի բոլոր ձևերը: Այսօր երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային հանրության ջանքերի համախմբումը և բազմաթիվ հուշագրերի ընդունումը հանգեցնում են խնդրի ձևակերպմանը և լուծման հարցերում մոտեցումների միասնականացման պաշտպանական համանման տեխնոլոգիաների մշակման և ներդրման: Չայտնի է, որ երեխայի նկատմամբ բռնության երևույթի պատճառները բազմազան են ու պայմանավորված են ծնողի և երեխայի, ընտանիքի և հասարակության, ժողովրդագրական ու

մշակութային առանձնահատկություններով:

Այսպես օրինակ, հայկական ավանդական դաստիարակությունը բռնությունը խրախուսող տարրեր ունի, և երեխաներին պատժելն ու նրանց նկատմամբ բռնությունը դեռևս տարանջատված չեն: Ծնողները հաճախ բռնությունը բացատրում են երեխային դաստիարակելու և ընտանիքում կարգ ու կանոն հաստատելու անհրաժեշտությամբ: Ակնհայտ է նաև, որ հասարակությունը բավականաչափ տեղեկացված չէ չարաշահման և բռնության հետևանքների մասին:

Այսինքն, երեխայի հանդեպ դաժանության նկատմամբ դեռևս ժխտողական վերաբերմունք չկա: Փաստորեն, խիստ դատապարտվում են միայն այն դեպքերը,

երբ ֆիզիկական ծանր վնասվածքներ կամ մահ է արձանագրվում: Մնացած դեպքերում հայ ընտանիքը փորձում է առաջ տանել «իմ երեխան իմ սեփականությունն է» վտանգավոր մտայնությունը: Քննարկվող հարցում էական դեր ունի նախևառաջ ծնող–երեխա փոխհարաբերությունների որակը: Նրանք, ովքեր չարաշահում և անտեսում են իրենց երեխաներին, հաճախ բնութագրվում են ավելի բացասական և վերահսկող՝ համեմատած մյուս ծնողների հետ: Նրանք, ովքեր մերժված են, հաճախ խուսափող կապվածության պատկեր են ներկայացնում և նրանք, ովքեր ոչ հետևողական խնամք և դաստիարակություն են ստանում, նույնպես հաճախ անապահով կապվածություն են ունենում իրենց ծնողների հետ: Նշված գործոնների հետ մեկտեղ կարող են դեր խաղալ նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են, օրինակ, ընտանիքի աղքատությունը, սոցիալական մեկուսացումը և այլն: Այնուամենայնիվ, անկախ այն հանգամանքից, թե ինչ ձևով է կատարվում բռնությունը, այն ազդում է երեխայի ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և մտավոր զարգացման վրա: Այսպիսով, ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի այն պարզ ճշմարտությունը, որ ընտանիքը արժեք է, և չպետք է թույլ տալ, որ վեճերն ու հակամարտությունները այն հասցնեն ընտանիքի կորստի: Ուստի այստեղ կարևորվում են փոխզիջումը, դիմացիոն միևնույն վերջ լսելու և և ընթրնելու, ապրումակցելուկարողությունը:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով ընտանիքի հոգեբանությունն և կոնֆլիկտներ թեման, կրկին համոզվեցի թեմայի կարևորության և այն ուսումնասիրելու անհրաժեշտության մեջ: Այս հարափոփոխ աշխարհում, սլացող իրադարձությունների, վազող կյանքի ընթացքում անհրաժեշտ է մի պահ կանգ առնել, նայել շուրջն ու մեր ներսը ու գնահատել, արժևորել և վերաարժևորել

ամեն ինչ՝ ընտանիքը, ընտանիքում միմյանց հետ հարաբերությունները, հասկանալ և ընդունել և վարակել դիմացինին, մեր մանկավարժներիս դեպքում, հատկապես աշակերտին և ծնողին, այն պարզագույն ճշմարտությունը, որ ընտանիքը ԱՐԺԵԶ է, և չպետք է թույլ տալ, որ վեճերն ու հակասությունները, որ բնական են ցանկացած սոցիալական խմբի համար, հասցնեն ընտանիքի

կորստի: Ուստի այստեղ կարևոր

են փոխզիջումը և կոնֆլիկտի պատճառների բացահայտում, ընթացքի վերլուծություն: Կոնֆլիկտները, որքան էլ տարօրինակ թվա, նպաստում են անձի աճին: Կոնֆլիկտը, պրոբլեմը հաղթահարելուց հետո բարձրանում է մարդու

ինքնագանահատականը: Կոնֆլիկտի դեպի կառուցողական փուլ տանող միանշանակ կայացած, կարդացած և ներքին պոտենցյալ ունեցող անձին է բնորոշ, իսկ դեպի փակուղի տանողը

զուրկ է վերոհիշյալ հատկություններից: Վերջապես կոնֆլիկտից հետո ուժեղ մարդն է ունակ ներելու, դրանով նաև դրսևուելով դիմացինի հանդեպ սեր, հոգատարություն և անշահախնդրություն: Երբ մարդ ներում է, նա ազատագրվում է ատելությունից, բացասական մտքերից, ագրեսիվ վարքից, անկանխատեսելի գործողություններից:

Եվ վերջում, մենք մեր առջև նստած ապագայում ընտանիք կազմողներին, այսինքն այսօրվա մեր աշակերտներին պիտի հասու պահենք այս մոտեցումները, պիտի հարազատ դարձնել նրանց համար կառուցողական մոտեցումը խնդրին և խորթ ու մերժելի դարձնել ապակառուցողականությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լիդա Արամյան, Կոնֆլիկտների կառուցողական և ապակառուցողական գործառույթները, Ջոզեֆանությունը և կյանքը: Չանգակ հրատարակչություն, Երևան, 2011թ.
2. Սեդրակ Սեդրակյան, Ներընտանեկան ճգնաժամի տեսակներն ու մակարդակները, Ջոզեֆանությունը և կյանքը: Չանգակ հրատարակչություն, Երևան, 2011 թ.
3. Վիքիպեդիա կայք:
4. Հասարակագիտության 10-րդ դասագիրք: Երևան, 2009

